

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 72-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ և 12-րդ կետերով.

«11) եթե ոչ իրացման նպատակով 2025 թվականի օգոստոսի 1-ից հետո ձեռք են բերվել կամ ներմուծվել են թեթև մարդատար ավտոմեքենաներ, բացառությամբ այն դեպքերի, երբ թեթև մարդատար ավտոմեքենաներն օգտագործվում են վարձույթով տրամադրելու համար: Սույն կետի կիրառության իմաստով, համարվում է, որ թեթև մարդատար ավտոմեքենան ձեռք է բերվել կամ ներմուծվել է ոչ իրացման նպատակով, եթե ավտոմեքենայի սեփականության իրավունքը օրենքով սահմանված կարգով ստացել է պետական գրանցում.

12) եթե 2025 թվականի օգոստոսի 1-ից հետո լիզինգի (տարատեսակների) պայմանագրերով ստացվել են թեթև մարդատար ավտոմեքենաներ, բացառությամբ այն դեպքերի, երբ թեթև մարդատար ավտոմեքենաներն օգտագործվում են վարձույթով տրամադրելու համար:»:

Հոդված 2. Օրենսգրքի 73-րդ հոդվածի՝

1) 8.1-ին մասում՝

ա. առաջին պարբերությունում «ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրին դասվող տրանսպորտային միջոցի, բացառությամբ» բառերից առաջ լրացնել «2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի հուլիսի 31-ը ներառյալ ձեռքբերված կամ ներմուծված՝» բառերը,

բ. երկրորդ պարբերությունում «առանձնացված» բառից հետո լրացնել «՝ հաշվանցված (պակասեցված)» բառերը,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի հուլիսի 31-ը ներառյալ ձեռք բերված կամ ներմուծված՝ վարձույթով տրամադրելու նպատակով օգտագործված՝ ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրին դասվող տրանսպորտային միջոցի՝ Հայաստանի Հանրապետությունում մատակարարման մասով սույն մասի համաձայն ԱԱՀ-ի բացասական տարբերությունը հաշվարկելիս տվյալ տրանսպորտային միջոցի՝ Հայաստանի Հանրապետությունում մատակարարման գործարքի մասով հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարին ավելացվում են նաև տվյալ տրանսպորտային միջոցի վարձույթով տրամադրման ծառայության մասով Օրենսգրքով սահմանված կարգով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ հաշվարկային փաստաթղթերով տվյալ տրանսպորտային միջոցը նույնականացնող տվյալների առկայության դեպքում:».

2) 8.1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.2-րդ մաս.

«8.2. Եթե ոչ իրացման նպատակով 2025 թվականի օգոստոսի 1-ից հետո ձեռք բերված կամ ներմուծված թեթև մարդատար ավտոմեքենաների մասով ԱԱՀ-ի գումարները Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն, նվազեցվել են հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներից, ապա տվյալ ավտոմեքենայի հետագա օտարման դեպքում նախկինում չհաշվանցված (չպակասեցված) ԱԱՀ-ի գումարներն ավելացվում են թեթև մարդատար ավտոմեքենայի օտարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին՝ տվյալ թեթև մարդատար ավտոմեքենայի հաշվեկշռային արժեքի նկատմամբ ԱԱՀ-ի 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով հաշվարկված գումարի չափով, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ թեթև մարդատար ավտոմեքենայի օտարումն ԱԱՀ-ով հարկվող գործարք է:

Սույն մասով սահմանված դեպքում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին ԱԱՀ-ի գումարների ավելացումը կատարվում է, եթե թեթև մարդատար ավտոմեքենայի օտարման պահին օտարողը, Օրենսգրքի համաձայն, համարվում է ԱԱՀ վճարող՝ անկախ թեթև մարդատար ավտոմեքենայի ձեռքբերման կամ ներմուծման պահին ԱԱՀ վճարող համարվելու հանգամանքից:»:

Հոդված 3. Օրենսգրքի 109-րդ հոդվածի՝

1) 1.2-րդ մասում «դիլեր չհանդիսացող» բառից հետո լրացնել «կամ լիզինգատու չհանդիսացող» բառը.

2) 1.2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում «նպատակով» բառերից հետո լրացնել «2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի հուլիսի 31-ը ներառյալ» բառերը:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը և 3-րդ հոդվածի 1-ին կետը տարածվում են 2023 թվականի դեկտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:

Պ-980-03.12.2024-SՀ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) ~~73-րդ հոդվածի 8.1-ին մասի առաջին նախադասության մեջ «ենթակա չէ հաշվանցման (պակասեցման)» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, երբ ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրին դասվող տրանսպորտային միջոցն օգտագործվել է վարձույթով տրամադրելու նպատակով:»:~~ ~~72-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ և 12-րդ կետերով.~~

~~«11) եթե ոչ իրացման նպատակով 2025 թվականի հոկտեմբերի 1-ից օգոստոսի 1-ից հետո ձեռք են բերվել կամ ներմուծվել են թեթև մարդատար ավտոմեքենաներ, բացառությամբ այն դեպքերի, երբ թեթև մարդատար ավտոմեքենաներն օգտագործվում են վարձույթով տրամադրելու համար: Սույն կետի կիրառության իմաստով, համարվում է, որ թեթև մարդատար ավտոմեքենան ձեռք է բերվել կամ ներմուծվել է ոչ իրացման նպատակով, եթե ավտոմեքենայի սեփականության իրավունքը օրենքով սահմանված կարգով ստացել է պետական գրանցում.~~

~~12) եթե 2025 թվականի հոկտեմբերի 1-ից հետո լիզինգի (տարատեսակների) պայմանագրերով ստացվել են թեթև մարդատար ավտոմեքենաներ, բացառությամբ այն դեպքերի, երբ թեթև մարդատար ավտոմեքենաներն օգտագործվում են վարձույթով տրամադրելու համար:»:~~

Հոդված 2. Օրենսգրքի 73-րդ հոդվածի՝

1) 8.1-ին մասում՝

ա. առաջին պարբերությունում «ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրին դասվող տրանսպորտային միջոցի, բացառությամբ» բառերից առաջ լրացնել «2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 30-ը հուլիսի 31-ը ներառյալ ձեռքբերված կամ ներմուծված՝» բառերը.

բ. երկրորդ պարբերությունում «առանձնացված» բառից հետո լրացնել «՝ հաշվանցված (պակասեցված)» բառերը.

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 30-ը հուլիսի 31-ը ներառյալ ձեռքբերված կամ ներմուծված՝ վարձույթով տրամադրելու նպատակով օգտագործված՝ ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրին դասվող տրանսպորտային միջոցի՝ Հայաստանի Հանրապետությունում մատակարարման մասով սույն մասի համաձայն ԱԱՀ-ի բացասական տարբերությունը հաշվարկելիս տվյալ տրանսպորտային միջոցի՝ Հայաստանի Հանրապետությունում մատակարարման գործարքի մասով հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարին ավելացվում են նաև տվյալ տրանսպորտային միջոցի վարձույթով տրամադրման ծառայության մասով Օրենսգրքով սահմանված կարգով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ հաշվարկային փաստաթղթերով տվյալ տրանսպորտային միջոցը նույնականացնող տվյալների առկայության դեպքում:».

3) 8.1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.2-րդ մաս.

«8.2. Եթե ոչ իրացման նպատակով 2025 թվականի հոկտեմբերի 1-ից օգոստոսի 1-ից հետո ձեռք բերված կամ ներմուծված թեթև մարդատար ավտոմեքենաների մասով ԱԱՀ-ի գումարները Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն, նվազեցվել են հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներից, ապա տվյալ ավտոմեքենայի հետագա օտարման դեպքում նախկինում չհաշվանցված (չպակասեցված) ԱԱՀ-ի գումարներն ավելացվում են թեթև մարդատար ավտոմեքենայի օտարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին՝ տվյալ թեթև մարդատար ավտոմեքենայի հաշվեկշռային արժեքի նկատմամբ ԱԱՀ-ի 16.67 տոկոս հաշվարկային դրույրաչափով հաշվարկված գումարի չափով, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ թեթև մարդատար ավտոմեքենայի օտարումն ԱԱՀ-ով հարկվող գործարք է:

Սույն մասով սահմանված դեպքում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին ԱԱՀ-ի գումարների ավելացումը կատարվում է, եթե թեթև մարդատար ավտոմեքենայի օտարման պահին օտարողը, Օրենսգրքի համաձայն, համարվում է ԱԱՀ վճարող՝ անկախ թեթև մարդատար ավտոմեքենայի ձեռքբերման կամ ներմուծման պահին ԱԱՀ վճարող համարվելու հանգամանքից:»:

Հոդված 23. ~~Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1.2-րդ մասում «դիլեր» բառից հետո լրացնել «կամ լիզինգատու» բառը: Օրենսգրքի 109-րդ հոդվածի՝~~

3) 1.2-րդ մասում «դիլեր չհանդիսացող» բառից հետո լրացնել «կամ լիզինգատու չհանդիսացող» բառը.

4) 1.2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում «նպատակով» բառերից հետո լրացնել «2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի հունիսի 30-ը հուլիսի 31-ը ներառյալ» բառերը:

Հոդված 34. ~~Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ~~

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:~~

~~2.- Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը եւ կիրառվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ:~~

3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը և 3-րդ հոդվածի 1-ին կետը տարածվում են 2023 թվականի դեկտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-980-03.12.2024-ՏՀ-011/1)

ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Nº	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
2.	ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Բաբկեն Թունյան	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ	Առաջարկվում է վերանայել 2025 թվականի օգոստոսի 1-ից հետո ձեռքբերված կամ ներմուծված թեթև մարդատար ավտոմեքենաների ԱԱՀ-ով և շահութահարկով հարկման կարգավորումները և այդ նպատակով վերականգնել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 1-ը գործող կարգավորումները, իսկ ներկայումս գործող կարգավորումների գործողության վերջնաժամկետ սահմանել 2025 թվականի հուլիսի 31-ը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ (Նախագծի 1-ին, 2-րդ և նոր՝ 3-րդ հոդվածներ):	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային	Ընդունվել է: Նախագծում սահմանվել է ներկայացված առաջարկությանը համապատասխան նոր կարգավորում (Նախագծի	Ընդունվել է:

			օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 73-րդ հոդվածի 8.1-ին մասի առաջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Վարձույթով տրամադրելու նպատակով օգտագործված՝ ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրին դասվող տրանսպորտային միջոցի՝ Հայաստանի Հանրապետությունում մատակարարման մասով սույն մասի համաձայն ԱԱՀ-ի բացասական տարբերությունը հաշվարկելիս՝ տվյալ տրանսպորտային միջոցի Հայաստանի Հանրապետությունում մատակարարման գործարքի մասով հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարին ավելացվում են նաև տվյալ տրանսպորտային միջոցի վարձույթով տրամադրման ծառայության մասով Օրենսգրքով սահմանված կարգով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ հաշվարկային փաստաթղթերով տվյալ տրանսպորտային միջոցի նույնականացնող տվյալների առկայության դեպքում:»:	2-րդ հոդված):	
4.	ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Բաբկեն Թունյան	Նախագծի 3-րդ հոդված	2025 թվականի օգոստոս 1-ից հետո ձեռքբերված կամ ներմուծված թեթև մարդատար ավտոմեքենաների ԱԱՀ-ով և շահութահարկով հարկման կարգավորումների վերանայման կապակցությամբ վերանայել	Ընդունվել է: Ներկայացված առաջարկություններին համապատասխան սահմանվել է նախագծի ուժի մեջ մտնելու նոր ժամկետ	Ընդունվել է:

			նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը և սահմանված անցումային հարաբերությունները:	(Նախագծի 4-րդ հոդված):	
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 4. 3.5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի: 4.6. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը և 3-րդ հոդվածի 1-ին կետն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի դեկտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:»:	Ընդունվել է: Ներկայացված առաջարկություններին համապատասխան նախագծում կատարվել են վերանայումներ (Նախագծի 4-րդ հոդված):	Ընդունվել է: